Հարգելի դոկտոր Պողոսյան,
Սրբազան հայր,

Հարգելի դասախոսներ, հյուրեր, ծնողներ և իհարկե հարգելի շրջանավարտներ, ինձ համար մեծ պատիվ է այս պահին գտնվել այստեղ և հնարավորություն ունենալ դիմելու մարդկանց ովքեր բոպեներ անց պաշտոնապես ավարտելու են այս համալսարանը:

Նախ, թույլ տվեք օգտվել ընձեռված առիթից և շնորհավորել Համալսարանի նորանշանակ ռեկտոր դոկտոր Բրյուս Պողոսյանին այս պատվավոր և միևնույն ժամանակ պատասխանատու պաշտոնում նշանակվելու կապակցությամբ: Հարգելի դոկտոր Պողոսյան վստահ եմ, որ Ձեր ղեկավարությամբ, Ամերիկյան համալսարանը, ոչ միայն կպահպանի այս 20 տարիների ընթացքում դժվարությամբ ձեռք բերված հաջողությունները, այլ նաև նորանոր լուրջ հաջողություններ կգրանցի:

Երբ օրեր առաջ ռեկտոր Պողոսյանը զանգահարեց ինձ և առաջարկեց ելույթ ունենալ ավարտական հանդիսության ժամանակ անկեղծ ասած առաջին զգացումը, որ ունեցա դա հպարտությունը չէր, այլ պատասխանատվության զգացումը: Վերջին անգամ նման մեծ պատասխանատվության զգացում ունեցել էի անցյալ տարի սեպտեմբերին, երբ տեղեկացա, որ Հայաստանի Հանրապետության անունից ելույթ պետք է ունենամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում՝ Ադրբեջանի մի խումբ քաղաքացիների կողմից Հայաստանի դեմ ներկայացված հայցի քննության ժամանակ: Այստեղ արդարացիորեն կարող է հարց առաջանալ, ի՞նչ կապ կա Եվրոպական դատարանում և Ամերիկյան համալսարանի ավարտական հանդիսության ժամանակ իմ ելույթների միջև, և ամենակարևորը՝ ինչու՞ է անհանգստության զգացումը նույնը: Եվ պատկերացրեք պատասխանը շատ պարզ է: Չափազանց մեծ պատասխանատվության զգացումը բացատրվում է այն հանգամանքով, որ և՛ Եվրոպական դատարանի դատավորներին, և՛ այստեղ նստած շրջանավարտներին իմ ասած յուրաքանչյուր բառը պետք է լրջորեն կշռադատված լինի, քանի որ կարող է ազդեցություն ունենալ Հայաստանի ապագայի վրա:

Ելույթը պատրաստելիս փորձեցի ետ գնալ և տեսնել թե նախորդ տարիներին ովքեր են այս ամբիոնից նույն առիթով ելույթ ունեցել: Թույլ տվեք անուններ չտալ, դուք ինքներդ կարող եք հեշտությամբ ծանոթանալ այդ մարդկանց ցուցակին և համոզվել, որ չկան պատահական անուններ, անխտիր բոլորն իրենց համապատասխան ոլորտներում լուրջ հաջողությունների հասած

գիտնականներ և քաղաքական գործիչներ են: Սակայն, նրանց բոլորի և իմ մեջ կա մեկ կարևոր տարբերություն: Ուղիղ 10 տարի առաջ, 2001 թվականին, նույնպիսի ավարտական հանդիսության ժամանակ, ես նստած էի այս դահլիճում՝ այ այդտեղ 5-րդ շարքում և ձեզանից ոչ պակաս հուզված սպասում էի, որ ռեկտոր Հարություն Արմենյանը հանձնի իմ ավարտական դիպլոմը:

Եվ ահա, 10 տարի հետո ես դահլիճի ուսանողի նստարանից հայտնվել եմ ամբիոնի մոտ: Չէի ասի, որ հեշտ է եղել այս ճանապարհը: Ամերիկյան համալսարանը ավարտելուց հետո ես ավարտեցի նաև Հոլանդիայի Լեյդենի համալսարանի միջազգային իրավունքի ֆակուլտետը, հետո վերադարձա Հայաստան, 2003-ից սկսեցի դասավանդել Ամերիկյան Համալսարանի իրավագիտության ֆակուլտետում, ապա աշխատանքի անցա Արդարադատության նախարարությունում, 2008-ին նշանակվեցի արդարադատության փոխնախարար և այլն:

Սակայն, այս համատեքստում մեկ բան հստակ է, չլիներ իմ կյանքում Ամերիկյան համալսարանը, ես միանշանակ չէի լինի այնտեղ, որտեղ այժմ գտնվում եմ: Ամերիկյան Համալսարանի իրավագիտության ֆակուլտետում սովորելն ինձ համար եղել է այն ամուր հիմքը, որի վրա ես հետագայում կառուցել եմ իմ մասնագիտական կարիերան: Սա, իսկապես այն դեպքն է, երբ կարելի է վստահաբար ասել, որ Ամերիկյան համալսարանում սովորելը փոխեց իմ ամբողջ կյանքը: Փոփոխությունը արմատական էր, որովհետև Ամերիկյան համալսարանի իրավագիտության ֆակուլտետում սովորելը վերջնականապես խաչ քաշեց պատմաբան դառնալու իմ երազանքի վրա և ինձ անդառնալիորեն դարձրեց իրավաբան:

Եվ ահա, քանի որ հիշեցի պատմաբան դառնալու իմ չիրականացած երազանքի մասին, կուզենայի առաջարկել, որ մենք բոլորով մի պահ ետ նայենք մեր պատմությանը և հիշենք թե քանի՞ անգամ ենք լսել այն հպարտ արտահայտությունը, որ Հայ ժողովուրդը ազատատենչ ժողովուրդ է և պատմության ընթացքում, որոշ պատմաբանների կարծիքով 7, որոշների կարծիքով 8 և ավելի անգամ վերանվաճել է իր անկախությունը: Վստահ եմ սրա մասին բոլորդ եք լսել: Բայց մտածել եք արդյո՞ք, որ այսքան անգամ ստիպված ենք եղել մեր ազգի լավագույն զավակների կյանքի գնով վերանվաճել անկախությունը, որովհետև մեր ազգի մյուս զավակները չեն կարողացել պահպանել անկախությունը և կառուցել հզոր պետություն: Շատ տխուր պարբերականությամբ, մեր բազմադարյա պատմության ընթացքում մենք

ստիպված ենք լինում ժամանակ առ ժամանակ բժիշկների ու իրավաբանների, երաժիշտների ու բանաստեղծների, մաթեմատիկոսների ու ճարտարապետների մի ամբողջ սերունդ զոհաբերել որպես զինվորներ, որպեսզի վերանվաճենք մեր անկախությունը: Մեկ բան անվիճելի է անկախություն նվաճելը և այն պահպանելը տարբեր հմտություններ են պահանջում:

Մենք, Աստծո բարեհաճությունը չարաշահելու և մեր անկախ պետությանը նորից նույն անփութությամբ վերաբերվելու իրավունք այլևս չունենք: Մեր ժողովրդի զոհողությունների գնով ձեռք բերած անկախության պահպանման պատասխանատվությունը այսուհետ նաև ձերն է սիրելի շրջանավարտներ:

Վստահ եմ բոլորդ եք ճանաչում ազգային հերոս Մոնթե Մելքոնյանին՝ մեր Ավոյին, և նաև վստահ եմ, որ շատերը նրան ճանաչում են որպես տաղանդավոր հրամանատար և որպես բացառիկ հայրենասեր: Սակայն, վստահ եմ քչերը գիտեն, որ Մոնթեն երիտասարդ տարիներին եղել է խոստումնալից բեյսբոլիստ, որ նա հնագետ, ուրարտագետ էր, որ ավարտել է Կալիֆոռնիայի Բերկլիի համալսարանի հին ասիական ժողովուրդների պատմության և հնագիտության բաժինը, որ նա տիրապետում էր 8 լեզուների, որ ընդունվել էր Օքսֆորդի համալսարան, սակայն թողել էր այն, որպեսզի մասնակցի Հայ ժողովրդի ազատագրական պայքարին: Մասնակցեց և ինչպես գիտեք հերոսաբար զոհվեց որպես զինվոր:

Հիմա, պատկերացրեք մի այսպիսի իրավիճակ, մարտական գործողությունների առաջին գիծ, թեժ մարտից հետո ժամանակավոր դադար է, Մոնթեին է խրամատում սպասում մի արտասահմանցի լրագրող, որը ուզում է նրանից հարցազրույց վերցնել Արցախյան պատերազմին առնչվող հարցերի վերաբերյալ: Հարցազրույցի վերջում լրագրողը Մոնթեին հարցնում է «Ինչպիսի՞ն եք տեսնում Հայաստանի ապագան»: Հաշվի առնելով պատերազմական իրավիճակը և այն, որ հարցազրույցը տեղի է ունենում առաջին գծում, կարելի է կարծել թե Մոնթեն պետք է պատասխաներ «հաղթական» կամ «անվտանգ սահմաններով» կամ գոնե տար մեր հայկական ավանդականը պատասխանը՝ «ծովից-ծով» –, բայց ո՛չ. Մոնթեն պատասխանում է՝ «Առանց կոռուպցիայի, և արդար»: Այո-այո անգլերենով պատասխանում է՝ «Without corruption ... and just»:

Այս պատգամը կարծում եմ չափազանց կարևոր պետք է լինի մեզանից յուրաքանչյուրի համար, անկախ նրանից, թե որ ոլորտում ենք աշխատում: Ասացվածք կա՝ «Զգաստությունը Ազատության գինն է»: Ամեն օր, ամեն րոպե, ազատության և արդարության ճակատում մենք գտնվում ենք առաջին գծում,

երբեմն պարտվում ենք մեկ հարվածով, սակայն ավելի հաճախ պարտվում ենք աննշան հետքայլերով և անգործությամբ:

Ուրեմն, ոչ պակաս հերոսություն է պահանջվելու մեզանից յուրաքանչյուրից մեր առօրյա կյանքում և աշխատանքում, որպեսզի մեր երիտասարդ պետությունը հզորանա այնքան, որ մենք և մեր սերունդները երբեք այլևս կարիք չունենաք հերոսանալու ռազմի դաշտում, պետականությունը նորից վերականգնելու համար: Հզոր Հայաստանի կառուցման գործում մեզ դիմակայում են հզոր թշնամիներ՝ անարդարություն, կոռուպցիա, աղքատություն, տգիտություն, անաստվածություն, անտարբերություն, սա հզոր Հայաստան ունենալու մեր ճանապարհին թշնամիների ոչ լրիվ ցանկն է:

Այս և բազմաթիվ այլ թշնամիներին հաղթելու և օրենքի գերակայությունը հաստատելու համար, այստեղ դուք ստացել եք գիտելիքների մի հզոր զինանոց և պահանջվում է միայն կամք դրանք ոչ միայն ի շահ ձեզ այլ նաև ի շահ Հայաստանի ապագայի կիրառելու: Փորձեք տեսնել ձեր ապագան Հայաստանի ապագայի համատեքստում և ամեն ինչ պարզ կդառնա: Հիշեք, որ մի խումբ նվիրված և հայրենասեր մարդկանց կողմից (որոնցից մի քանիսն այս պահին բեմում նստած են) 1991 թվականին այս համալսարանի հիմնադրումը նույնպես հերոսությունն էր: Նրանք նպատակ ունեին ստեղծել կամուրջ, որով Հայաստանը կկապվի սփյուռքի, ինչու՞ չէ ամբողջ աշխարհի հետ: Ռոպեներ անց երբ կստանաք ձեր դիպլոմները դուք նույնպես կստանձնեք պարտավորություն այս նպատակների իրականացման համար:

Ամենակարևորն այն է, որ այս համալսարանը դուք ավարտում եք ոչ միայն գիտելիքներով, այլ նաև նոր գիտելիքներ հայթայթելու կարողությամբ: Արագ փոփոխվող այս աշխարհում, երբ գիտելիքը շատ արագ է հնանում, սա չափազանց կարևոր զենք է:

Թե ինչքանո՞վ մենք կհաջողենք այս պայքարում, դրանից կախված կլինի, թե ինչպիսի Հայաստան կկառուցենք և թե արդյո՞ք կիրականա մեր մյուս ազգային հերոս Վազգեն Սարգսյանի խոսքը, որ «21-րդ դարը մերն է լինելու»: Ես վստահ եմ, որ նաև ձեր օգնությամբ սիրելի շրջանավարտներ, 21-րդ դարը, իսկապես մերն է լինելու և այդ գործում մեզ բոլորիս մաղթում եմ հաջողություն:

Շնորհակալություն: